ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

17.10.2017թ. | ժամը 18:00-20:30 | ՀՀ կառավարություն

Մասնակիցներ՝ **Բազմաշահառու խմբի անդամներ**

Նախագահող՝	Դավիթ Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
	Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
	Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
	Կարեն Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
	Պերճ Խաչատրյան	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար
	Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
	Արթուր Համբարձումյան (ԲՇԽ ժամանակավոր անդամ)	«Հասարակական ձայն» («Սիվիլ Վոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

ՀՀ կառավարության աշխատակազմ

Լիլիա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար
Լուսինե Թովմասյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ

Հյուրեր՝

Արտաշես Դավթյան	Հայաստանում ՄԹ դեսպանություն
Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում
Շուշանիկ Քերոբյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
Արման Պողոսյան	Պետական եկամուտների կոմիտե
Արման Մնացականյան	Պետական եկամուտների կոմիտե
Ջերեմի Ուիթ	միջազգային փորձագետ
Ալեն Ամիրխանյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կետրոն (ՀԱՀ ՊՀԿ)
Անաստաս Աղազարյան	ՀԱՀ ՊՀԿ
Հրաչյա Հովհաննիսյան	ՀԱՀ ՊՀԿ
Կառլ Ուլբրիխտ	ՀԱՀ ՊՀԿ
Դավիթ Հակոբյան	ՀԱՀ ՊՀԿ

Բացականեր՝

Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խորհրդական
Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն

Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
Արթուր Գրիգորյան	«Էկոիրավունք» հասարակական կազմակերպության նախագահ

Արձանագրող՝ Լուսինե Թովմասյան

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատանքային նիստը նվիրված էր ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացված ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի նախնական ուսումնասիրության (scoping study) նախագծի վերաբերյալ մի շարք հարցերի քննարկմանը

Դ.Հարությունյանը ողջունեց նիստի մասնակիցներին և առաջարկեց ամփոփել նախորդ նիստից հետո կատարված աշխատանքները և անցնել չքննարկված հարցերի քննարկմանը:

ՀԱՀ ՊՀԿ-ի ներկայացուցիչները նշեցին, որ նախնական ուսումնասիրության լրամշակված նախագծում կտրվեն ներկայացված բոլոր նկատառումների պատասխանները, որի համար անհրաժեշտ է նաև սերտ համագործակցություն ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության հետ: Նշվեց, որ մինչև հոկտեմբերի վերջ կներկայացվի ուսումնասիրությունների փաթեթը: Առաջարկվեց՝ մինչև լրամշակված նախագծի ներկայացումը կազմակերպել հանդիպում՝ մեկ անգամ ևս քննարկելու ներկայացված դիտարկումները:

Քննարկված հարցերը

1. Ֆինանսական տվյալների ներկայացման մեթոդը

Տեղեկացվեց, որ ստացվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կարծիք-պարզաբանումը այն հարցի վերաբերյալ, թե կան արդյոք հստակ պահանջներ, թե որ մեթոդով (կանխիկ և հաշվեգրման) պետք է ներկայացվեն տվյալները: Ըստ այդ կարծիքի՝ ԱՃԹՆ-ի զեկույցներում երկու մեթոդներն էլ օգտագործվում են: Այս պարագայում կարևորը համադրման ժամանակ սխալներից խուսափել է, որը հնարավոր է, երբ համադրվում են 2 տարբեր մեթոդներով հավաքագրված տվյալները:

Լավագույն տարբերակն է՝ օգտագործել այն մեթոդը, որով գրանցվում են պետական եկամուտները:

Ներկայացվեց կարծիք, որ տվյալները կախիկ մեթոդով ներկայացնելու դեպքում կարող ենք ստանալ ոչ ճշգրիտ պատկեր տվյալ տարվա համար կատարված վճարումների վերաբերյալ: Ճշգրիտ տվյալներ դուրս բերելու համար պետք է հավաքագրել ավելի երկար ժամանակահատվածի տվյալներ, այնուհետև, պարզել հաշվետու տարվան առնչվող վճարումները, որը դժվարացնում է գործընթացը:

Հաշվեգրման մեթոդը կիրառելիս՝ հիմք է ընդունվում հարկային մարմիններ կամ այլ լիազոր մարմիններ ներկայացված հավետվություններում ներկայացված հարկային պարտավորությունը: Առկա են նվազագույն ռիսկեր, որ հաշվետվություններով ներկայացված վճարումների պարտավորությունները կարող են չկատարվել: Կարճաժամկետ ժամանակահատվածի համար առավել ճշգրիտ և իրատեսական տվյալներ կարելի է ստանալ հաշվեգրման մեթոդի կիրառման դեպքում: Աուդիտի ենթարկվող և հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների հիմքում նույնպես դրվում է հաշվեգրման մեթոդը: ԱՃԹՆ-ի խնդիրն է բացահայտել, թե հաշվետու տարվա համար հանքարդյունաբերության ոլորտը ինչ արդյունքներ է ապահովել և պետությանը ինչպիսի գումարներ են հաշվեգրվել: Տեղեկացվեց նաև, որ հաշվեգրման մեթոդով տվյալները պետական մարմիններին հասանելի են լինում հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսից հետո: 2018 թվականից գործելու է միասնական գանձապետական հաշվի համակարգը, ըստ որի՝ վճարված գումարը չի համարվելու բյուջեի մուտք, քանի դեռ չի ներկայացվել համապատասխան հաշվարկը: Կարծիք հայտնվեց, որ տեղեկատվությունն օգտագործողին հասկանալի դարձնելու տեսանկյունից նույնպես ավելի շահեկան է հաշվեգրման մեթոդի կիրառումը:

Հիմնվելով ներկայացված փաստարկների վրա՝ **որոշվեց՝** ԱՃԹՆ-ի զեկույցում ներառվող տվյալները ներկայացնել հաշվեգրման մեթոդով: Հետագայում, երբ մի քանի հրապարակված զեկույցների արդյունքում հասանելի կլինեն տվյալների երկար շարքեր, ԲՇԽ-ն կարող է կրկին անդրադառնալ այս հարցին: **Հանձնարարվեց**՝ մշակված աղյուսակի ձևը տրամադրել ՀԱՀ ՊՀԿ-ին որպեսզի լրացվի, թե որ տվյալը ինչ ժամկետում է հասանելի լինում:

2. Նախորդ աշխատանքային նիստի արձանագրության հաստատում

Հայտարարվեց, որ ԲՇԽ-ի անդամներին նախապես ներկայացվել էր նախորդ աշխատանքային նիստի արձանագրությունը, որում ներկայացված են ԲՇԽ-ի մի շարք որոշումներ: ԲՇԽ-ի անդամների կողմից արձանագրության նախագծի վերաբերյալ առարկություններ չներկայացվեցին, և **որոշվեց՝** ԲՇԽ-ի աշխատանքային նիստի N6 արձանագրությունը համարել ընդունված:

3. Անձնական տվյալների պաշտպանությունը

Հիշեցվեց, որ ՀՀ արդարատադության նախարարությանն ուղղվել էր հարցում անձնական տվյալների պաշտպանության հետ կապված խնդիրների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տրամադրելու նպատակով: Ներկայացվեց, որ ըստ փորձագիտական եզրակացության, եթե տվյալներ են տրամադրվում ֆիզիկական անձանց վերաբերյալ, ապա այդ տեղեկատվությունը պարունակում է անձական տվյալներ և դրա հրապարակումը հակասում է անձնական տվյալների պաշտպանությանը, եթե բացակայում է հրապարակման օրենսդրական հիմքը կամ տվյալ անձի կողմից տրված համաձայնությունը: Իսկ եթե հրապարակվելիք տվյալները վերաբերում են նախորդող տարիներին, ապա օրենսդրական փոփոխությունը հետադարձ ուժով դժվար թե ընդունվի: Իրավաբանական անձանց պարագայում անձնական տվյալների պաշտպանության խնդիր չի առաջանում: **Հանձնարարվեց՝** ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված տեղեկանքը տրամադրել ԲՇԽ-ի անդամների և նիստի մասնակիցներին:

4. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում

Միջազգային փորձագետ Ջերեմի Ուիթը ներկայացրեց իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները: Ներկայացվեց, որ տեղական փորձագետ Դավիթ Սարգսյանի հետ իրականացվում են խորհրդատվական հանդիպումներ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ: Աշխատանքների արդյունքում նոյեմբերի սկզբին տրամադրվելու է իրավական ուսումնասիրության զեկույց, որից հետո սկսվելու են ճանապարհային

քարտեզի մշակման աշխատանքները: Իրավական ակտերի նախագծերը կտրվեն ծրագրի վերջին փուլում:

5. Հաշվետվություն ներկայացնող և համադրվող կազմակերպությունները, էականության շեմերը

Ներկայացվեց, որ ԲՇԽ-ն պետք է որոշի, թե ԱՃԹՆ-ի զեկույցի համար որ ընկերություններն են հաշվետվություններ ներկայացնելու, այդ ընկերություններից որոնք և որ հարկերի ու վճարումների գծով պետք է համադրվեն:

Առաջարկվեց, որ ԱՃԹՆ-ի զեկույցի համար հաշվետվություններ ներկայացնեն մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող բոլոր ընկերությունները: Սակայն անհրաժեշտ է սահմանել այն էականության շեմերը, որոնք գերազանցող ընկերությունների տվյալները պետք է համադրվեն անկախ ադմինիստրատորի կողմից: Նշվեց, որ նախնական ուսումնասիրության նախագծում տրվող ընկերությունների ցանկը հավաստի չէ և լրամշակման կարիք ունի: **Հանձնարարվեց**, որ ՀԱՀ ՊԿՀ-ն ներկայացնի չափանիշների խումբ (օրինակ, հասույթ, աշխատողների թվաքանակ, ծախսումներ) և դրանց հիման վրա բանաձև (մեթոդ), որով կգնահատվեն ընկերությունները և, օրինակ, վերին 25 տոկոսը կընդգրկվի համադրվող կազմակերպությունների ցանկում, ինչպես նաև իրականացնի համապատասխան գնահատում: Անհրաժեշտ է ներկայացնել նաև համադրվող հարկերի և վճարումների տեսակները սահմանելու համար էականության շեմի որոշման մեթոդի առաջարկություն և իրականացնել այդ մեթոդին համապատասխան գնահատում:

6. Կարևոր հետախուզական (ուսումնասիրության) աշխատանքների ամփոփ նկարագիրը

Ներկայացվեց, որ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջ է, որ զեկույցը պարունակի իրականացվող ցանկացած կարևոր հետախուզական, արդյունահանման նպատակով ուսումնասիրության աշխատանքների ամփոփ նկարագիրը: Այս պահանջը բավարարելու համար պետք է սահմանվի «կարևոր» հասկացությունը: Քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ դժվար է սահմանել որևէ չափանիշ՝ ըստ որի ուսումնասիրությունների աշխատանքները կդասակարգվեն: Առաջարկվեց,

որ որպես կարևոր կարող են դիտարկվել 4-րդ փուլի՝ պաշարների գնահատման փուլում գտնվող ծրագրերը, որը, սակայն, նույնպես արժանահավատ չափանիշ չէ: Ճիշտ չէ նաև ըստ տարածքի դասակարգումը: Միջազգային փորձագետը նշեց, որ ԱՃԹՆի ստանդարտը այս հարցին հստակ պատասխան չի առաջարկում և տարբեր երկրներ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում, օրինակ, Ղազախստանի զեկույցում ներկայացվում է ըստ հանքատեսակների գնահատված ընդհանուր պաշարների մասին տեղեկատվություն: Այսպիսի տեղեկատվության հրապարակումն ավելի համահունչ է ԱՃԹՆ-ի սկզբունքներին:

Նշվեց, որ կառավարությունում շրջանառվում է օրենքի նախագիծ, ըստ որի՝ ամսական, եռամսյակային և տարեկան մոնիթորինգի գործընթացը հանրայնացվելու է և առաջարկվեց, որ այդ մասին նույնպես անհրաժեշտ է նշել ՊՀԿ-ի ուսումնասիրության մեջ:

Քննարկման արդյունքում **առաջարկվեց**՝ ԱՃԹՆ-ի զեկույցում նկարագրել տվյալ տարվա ընթացքում շնորհված թույլտվությունների և համապատասխան ծրագրերի նկարագրությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում երկրում հաստատված պաշարների ագրեգացված մեծությունը՝ ըստ հանքատեսակների: Վերջնական որոշում կայացնելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել, թե արդյոք հաստատված պաշարների ագրեգացված չափը համարվում է գաղտնի տեղեկատվություն, որի պատասխանը պետք է տրվի նախնական ուսումնասիրության մեջ:

7. Արդյո՞ք մետաղաձուլական կազմակերպությունները պետք է ընդգրկվեն ԱՃԹՆ-ի զեկույցում և հաշվետվություններ ներկայացնեն

Քննարկվեց մետաղաձուլական կազմակերպությունները ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգրկելու հարցը: Հայաստանում նման գործունեությամբ զբաղվում են 4-5 ընկերություններ:

Նշվեց, որ եկամտի փոխանցմանը ու փոխանցման գնագոյացմանն առնչվող մտահոգությունները, որ առկա են մետաղաձուլական կազմակերպությունների հետ կապված, կարող են լինել նաև թրեյդերային ընկերությունների առնչությամբ: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում արդյունահանվում է մոտավորապես 450 հազ. տոննա խտանյութ, որից միայն 50 հազ. տոննա խտանյութն է վերամշակվում մետաղաձուլական կազմակերպությունների կողմից: ՀՀ

հարկային օրենսդրության մեջ կան կանխարգելիչ նորմեր, որպեսզի ընդերքի շահագործողը հնարավորություն չունենա կատարել եկամտի տրասֆեր կամ հարկման բազայի նվազեցում, այդ թվում ռոյալթիների գծով:

Ներկայացվեց, որ մետաղաձուլական գործունեության (midstream) ընդգրկումը ԱՃԹՆ-ի զեկույցում ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներից դուրս է, և midstream գործունեության ընդգրկումը առավել կարևոր է նավթի և գազի արդյունահանում իրականացնող երկրների համար, երբ հաշվետու են դառնում փոխադրող ընկերությունները՝ գազատարը, նավթատարը, քանի որ այդ ընկերությունները կարող են սահմանափակել արդյունահանողի իրավունքները, կամ դառնալ փոխկապված կազմակերպություն:

Ներկայացվեց նաև, որ մետաղաձուլական կազմակերպությունների իրավական ձևակերպում տալը դուրս է ընդերքի օրենսդրության կարգավորման շրջանակից, ինչպես նաև այդ գործունեությունը լիզենզավորվող գործունեության տեսակ չէ: **Որոշվեց**, որ մետաղաձուլական ընկերությունները ԱՃԹՆ-ի շրջանակում ներառելու մասին որոշումը կկայացվի նախանական ուսումնասիրության մեջ հարցի բազմակողմանի ուսումնասիրության արդյունքում:

8. Ըստ կազմակերպությունների հարկերի և վճարումների բացահայտումը թույլատրող իրավական փոփոխությունները

ՊԵԿ-ի ներկայացուցիչների կողմից **ներկայացվեց**, որ քննարկվել է հարցը և իրենց կարծիքով ըստ կազմակերպությունների վճարված հարկերի ու վճարների բացահայտումը կարող է կարգավորվել ՀՀ կառավարության որոշմամբ: Տեղեկացվեց նաև, որ ներկայումս մշակվում է ռոյալթիի հաշվարկման նոր ձև, որի օգնությամբ հնարավոր կլինի ստանալ հանքաքարի մեջ պարունակվող յուրաքանչյուր մետաղի մասով հասույթը և լրացուցիչ բացահայտումներ կատարել:

9. ԱՃԹՆ-ի հաշվետվություններ չներկայացնելու համար տույժերի սահմանումը

Առաջարկեց՝ ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվություններ չներկայացնելու համար տույժերի չափի սահմանման համար կիրառել ֆինանսական հաշվետվություններ չհրապարակելու նորմերը: **Որոշվեց՝**

ընկերությունների կողմից ԱՃԹՆ-ի հաշվետվություններ չներկայացնելու համար տույժ սահմանել նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով՝ առանց հաշվետվություն ներկայացնելու պարտավորության հանման:

10. Այլ որոշումներ և հարցեր

- ✓ **Որոշվեց,** որ ՀԱՀ ՊՀԿ-ն առաջիկա շաբաթվա ընթացքում կներկայացնի անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը, իսկ մինչև հոկտեմբերի վերջ՝ նախնական ուսումնասիրության լրամշակված տարբերակը:
- ✓ Ներկայացվեց՝ ԲՇԽ-ի անդամի էլեկտրոնային եղանակով փոխանցված հայտարարությունը, ըստ որի, օրենսդրական փոփոխություններ կատարելիս, մասնավորապես, գաղտնիության նորմերի հետ կապված, անհրաժեշտ է հաշվի առնել, որ կարևոր է ԱՃԹՆ-ի ստանդարտի և ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացման ապահովումը:
- ✓ **Որոշվեց,** որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից կմշակվի հանքարդյունահանող կազմակերպությունների գրանցման ու գործունեության վայրերի և ազդակիր համայնքների ցանկը և այն կփոխանցվի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը:
- ✓ **Որոշվեց,** որ տրանսպորտային ծախսերը Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում էական չեն, և այդ տեղեկատվությունը պետք է ներառվի նախնական ուսումնասիրության մեջ: